Կազմված է՝ 15.04.2020թ.
Բաղկացած է՝ 6 էջից
Հաստատված է նոր խմբագրությամբ՝
«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ»
ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի
08. 05. 2020թ. նիստում

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՏԱՇԱՏ-2020Թ

ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
10 ՆԻՍՏԻ № 1 ՈՐՈՇՈՒՄ

15. 04. 2020թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
ՊՈԱԿ-Ի
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 <<Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ>> (այսուհետ՝Քոլեջ) Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՈՒԽ) Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ քոլեջ) ուսանողության ներկայացուցչական, ինքնավարության, ինքնակառավարման և նրա շահերը ներկայացնող ընտրովի մարմին է:

1.2 ՈՒԽ-ն ապաքաղաքական և ապակուսակցական մարմին է:

1.3 ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, Քոլեջի Կանոնադրությանը, սույն կանոնադրությանը և իր աշխատանքային պլանին համապատասխան:

1.4 ՈՒԽ կանոնադրությունը հաստատում, նրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում Քոլեջի Կառավարման խորհուրդը ՈՒԽ-ի առաջարկությամբ:

1.5 ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողների շահերը, նպաստում նրանց կրթական, մշակութային, ստեղծագործական, ֆիզիկական և բարոյական զարգացմանը:

1.6 ՈՒԽ-ն ունի իր անվամբ տարբերանշան, կարող է ունենալ ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ, որոնց վրա ՈՒԽ-ի հայերեն անվանումը պարտադիր է:

1.7 ՈւԽ-ի լրիվ անվանումն է՝ հայերեն՝ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի Ուսանողական խորհուրդ, ռուսերեն՝ Студенческий совет Араратского регионального государственного колледжа, անգլերեն՝ Student Council of Ararat Regional State College.

1.8 ՈւԽ-ի հասցեն է՝ քաղաք Արտաշատ, Աթարբեկյան 156, Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ։

II. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՈւԽ-ի նպատակներն են՝

1) քոլեջի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանը առնչվող հարցեր,
2) վերհանել ուսանողության կրթական ոլորտի խնդիրները,
3) մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
4) իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,
5) նպաստել ուսանողների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ու ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորմանը,
6) միավորել ուսանողների ջանքերը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, ուսանողների գիտական, կրթական, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը,
7) կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
8) մասնակցել քոլեջի տարածքում ներքին կարգապահության պահպանմանը։

III. ՈՒԽ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1 ՈւԽ-ն ձևավորվում է առնվազն 15 անդամներից /նախագահություն և անդամներ/,

3.2 ՈւԽ-ի կազմում կարող են ընդգրկվել առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսերի՝ հասարակական ակտիվություն, լավ և բարձր առաջադիմություն ցուցաբերող այն ուսանողները, որոնք առաջադրվում են կուրսերի կողմից՝ կուրսերի ժողովների ընթացքում ուսանողների առաջարկությամբ։

3.3 Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում տեղի է ունենում հաջորդ ուսումնական տարվա ՈւԽ ընտրությունը։

3.4 ՈւԽ-ի նախագահությունը կազմված է ՈւԽ նախագահից, փոխնախագահից, քարտուղարից, որոնք ընտրվում են նոր կազմված ՈւԽ կողմից։

3.5 ՈւԽ-ի նախագահը ընտրվում է՝ ներկայացնելով գործունեության կարգ /աշխատանքային պլան, նիստերի ժամանակացույց/, որը ՈւԽ նիստում քննարկվելուց հետո հաստատվում է ՈւԽ-ի կողմից։

3.6 ՈւԽ-ի նախագահի ընտրությունը կատարվում է փակ քվեարկությամբ, իսկ փոխնախագահի և քարտուղարի ընտրությունը՝ բաց քվեարկությամբ։
3.7 Հավասար ձայներ հավաքելու դեպքում, քվեարկությունը կատարվում է կրկին՝ հավասար ձայներ հավաքած թեկնածուների միջև։
3.8 ՈւԽ-ի նախագահը իրականացնում է ՈւԽ աշխատանքների ղեկավարումը։
3.9 ՈւԽ-ի նախագահը ներկայացնում է կատարած աշխատանքների հաշվետվություններ ուսանողների համաժողովների ընթացքում։
3.10 ՈւԽ-ի նախագահի բացակայության դեպքում, նախագահի պարտականու-թյունները կատարում է ՈւԽ-ի փոխնախագահը։
3.11 ՈւԽ-ի փոխնախագահը կարգավորում է ուսանողական ակումբների աշխատանքները։
3.12 Պատասխանատու քարտուղարը արձանագրում է ուսանողների համաժողովները և ՈւԽ նիստերը։
3.13 ՈւԽ-ն համարվում է ստեղծված և օգտվում է իր իրավասություններից՝ քոլեջի Կառավարման խորհրդի նախագահին իր անվանական կազմը և գործունեության կարգը պաշտոնապես ներկայացնելու պահից։
3.14 Նոր ՈւԽ-ի անվանական կազմը սահմանում և հաստատում է գործող ՈւԽ-ն։
3.15 ՈւԽ-ի լիազորությունների ժամկետը մեկ տարի է։

IV. ՈւԽ ԵՎ ՈւԽ ԱՄԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 ՈւԽ-ն իրավունք ունի՝
1) ստեղծելու ուսանողական տարբեր ակումբներ և աջակցելու դրանց աշխատանքների կազմակերպմանը,
2) արձագանքելու և իր իրավասությունների սահմաններում ընթացք տալու սովորողների անհատական և կոլեկտիվ առաջարկներին և դիմումներին,
3) սահմանելու և իրականացնել հարցումներ ուսանողության շրջանում՝ իր կատարած աշխատանքների արդյունավետության և որակի վերաբերյալ վերլուծություններ կատարելու նպատակով,
4) իրականացնել քոլեջի և սույն կանոնադրությունից, ինչպես նաև քոլեջի և ուսանողների հիմնական պարտականություններից և իրավունքներից բխող այլ լիազորություններ։

4.2 ՈւԽ-ն պարտավոր է՝
1) քոլեջի Կառավարման խորհրդում, գործող այլ խորհուրդներում, հանձնաժողովներում ապահովել ուսանողների ներկայությունը,
2) յուրաքանչյուր ուսումնական տարին սկսվելուց առնվազն մեկ շաբաթ առաջ հաստատել ՈւԽ անվանական կազմը, գործունեության կարգը և ներկայացնել Կառավարման խորհրդին,
3) բարեխղճորեն կատարել ստանձնած պարտականությունները,
4) խուսափել գործունեություններից, որոնք կարող են վնասել ուսանողների, դասախոսների կամ քոլեջի հեղինակությանը,

5) յուրաքանչյուր կիսամյակի վերջում կազմակերպել ուսանողների համաժողով, որի ընթացքում քննարկել ուսանողությանը առնչվող հարցեր և ներկայացնել ՈւԽ հաշվետվություն:

4.3 ՈւԽ անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

1) առանց հարգելի պատճառի երեք անգամ չի ներկայացել ՈւԽ-ի նիստերին,
2) ՈւԽ-ի որոշմամբ՝ խուսափել է աշխատանքից, չի կատարել որոշումները, կարգապահական խախտումների և քոլեջի կանոնադրությամբ սահմանված՝ չի կատարել ուսանողի պարտականությունները,
3) ավարտել է ուսումնառությունը,
4) հեռացվել է քոլեջից,
5) ներկայացրել է անձնական դիմում:

4.4 ՈւԽ-ի անդամի լիազորությունների դադարեցման մասին որոշումն ընդունում և հաստատում է ՈւԽ-ն:

V. ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 ՈւԽ-ն, հանդիսանալով ուսանողության ներկայացուցչական մարմին, ապահովում է Քոլեջի ուսանողության ներկայությունը՝

ա/կոլեգիալ կառավարման մարմին/ Կառավարման խորհուրդ/՝ ուսանողների կազմից 3 թեկնածու,

բ/ գործող այլ խորհուրդներում, հանձնաժողովներում՝ ուսանողների կազմից՝ թեկնածուների թիվը ըստ պահանջի:

5.2 Ուսանողության ներկայացուցիչների հավակնորդ կարող են լինել ինչպես ՈւԽ-ի անդամները, այնպես էլ ՈւԽ-ի անդամների կողմից առաջադրված՝ Քոլեջի ուսանողները:

5.3 Ուսանողության ներկայացուցիչների թեկնածությունները առաջադրվում են ՈւԽ-ի նիստում՝ ՈւԽ-ի անդամների կողմից:

5.4 Ուսանողության ներկայացուցիչները ընտրվում են ՈւԽ-ի նիստում՝ բաց քվեարկությամբ:

5.5 Հավասար ձայներ հավաքելու դեպքում քվեարկությունը կատարվում է կրկին՝ հավասար ձայներ հավաքած թեկնածուների միջև:

5.6 Ուսանողության ներկայացուցչի լիազուրությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել՝ տվյալ խորհրդի կամ հանձնաժողովի աշխատակարգի համաձայն, ինչպես նաև իրենց լիազորությունները դադարեցնելու մասին անձնական դիմումի համաձայն, որը ներկայացվում և քննարկվում է ՈւԽ նիստում:

5.7 Ուսանողության ներկայացուցչի թափուր տեղ առաջանալուց հետո այն համալրվում է 10 օրվա ընթացքում՝ ՈւԽ-ի կողմից:

VI. ՈՒԽ ՆԻՍՏԵՐԸ

6.1 ՈՒԽ-ի նիստերն անցկացվում են սույն կանոնադրությանը և ՈՒԽ-ի աշխատակարգին համապատասխան։
6.2 ՈՒԽ-ի նիստ է հրավիրվում առնվազն յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ, համաձայն իր նիստերի ժամանակացույցի, անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ՝ նախագահի կամ ՈՒԽ անդամների պահանջով։
6.3 Գործող ՈՒԽ-ի տվյալ ուսումնական տարվա վերջին նիստում հաստատվում է նոր ՈՒԽ անվանացանկը, գործունեության կարգը։
6.4 ՈՒԽ-ի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են ՈՒԽ անդամների կեսից ավելին։
6.5 ՈՒԽ-ի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ։
6.6 ՈՒԽ-ի նիստը վարում է ՈՒԽ-ի նախագահը։
6.7 ՈՒԽ-ի նիստերն արձանագրվում են։
6.8 ՈՒԽ-ի նիստերը փակ են, եթե այլ բան չի որոշվել։
6.9 ՈՒԽ-ի նիստերին, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել քոլեջի աշխատողներ, ուսանողներ, ծնողներ, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ։

VII. ՈՒԽ ԼՈՒԾԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

7.1 ՈՒԽ-ն համարվում է լուծարված քոլեջի Կառավարման խորհրդի կողմից, եթե չի կատարում իր լիազորությունները, երկու անգամ անընդմեջ չի գումարել նիստ ։
7.2 ՈՒԽ-ն վերակազմավորվում է սահմանված կարգով տասը աշխատանքային օրվա ընթացքում։